

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արագած Մաղաթեյանի շնորհավորական ուղերձը Անկախության տոնի կապակցությամբ

20.09.2018



Մի րեւի՛ հայրենակիցներ:

Շնորհավորում եմ բոլորիս սեպտեմբերի 21-ի՝ Հայաստանի Հանրապետության
Անկախության տոնի կապակցությամբ:

1991 թվականի սեպտեմբերի 21-ը ոսկե տառերով է գրվել հայ ժողովրդի պատմության
էջերում, քանզի այդ օրն այլևս իրականություն դարձավ անկախ պետականություն
ունենալու մեր ժողովրդի դարավոր երազանքը:

27 տարի առաջ՝ 1991 թվականի սեպտեմբերի 21-ին, մեր ժողովուրդը աներկբա <Այո> ասաց
անկախության հանրաքվեին և ի լուր մուղրակի այլ ժողովուրդների, պետությունների և
միջազգային կառույցների, հաստատեց, որ վերստանձնում է սեփական երկրի ճակատագիրը
տնօրինելու դժվարին, բայց պատվաբեր պատասխանատվությունը: Հայտարարեց, որ
ընդունում է նախնիների ժառանգությունը, ստանձնում է ազգային խնդիրներին տեր լինելու
և սերունդներին խաղաղ ու ապահով երկիր ժառանգելու պարտականությունը:

Մի րեւի՛նե՛ րս, անկախացած մեր երկրի ու մեր սիրասուն զավակների ապագան ու
անվտանգությունը, ապահովությունն ու բարեկեցությունը պայմանավորված է
յուրաքանչյուրիս ներդրած ջանքերով: Իսկ այդ ամենին հասնելու համար մենք պարտավոր
ենք ազգովի՝ Հայոց պետականության շուրջ համախմբված միասնականությամբ կերտել մեր
երազների երկիր Հայաստանի Հանրապետության պայծառ ապագան և սերունդներին
փոխանցել խաղաղ, գորացող ու հզոր հայրենիք:

Մի րեւի՛ հայրենակիցներ, կրկին շնորհավորում եմ Անկախության տոնի կապակցությամբ և
մաղթում մեր երկրին հարատև խաղաղություն, իսկ ժողովրդին՝ բարօրություն:

Կեցցե՛, Հայաստանի Հանրապետությունը: